

B.J. GALSTYAN, H.P. KARAGULYAN
WESTERN ARMENIA (VAN) AND NAGORNO-KARABAKH (ARTSAKH)
IN S.M GORODETSKY'S WORLDVIEW

The Russian prominent poet, translator, public figure Sergei Gorodetsky wrote many articles, poems and series of essays devoted to Western Armenia and Artsakh.

Gorodetsky lived and worked in Transcaucasia from 1916 to 1921, participated in the cultural life of the country, interacted with Armenian intellectuals, especially H. Toumanyant. In his speeches on the Armenian Cause, Gorodetsky has defended the interests of the Armenian people, exposed the colonial policy of the European powers towards Armenia, expressed his belief in its viability.

Keywords: Western Armenia, Genocide, Armenian people, Nagorno-Karabakh, national dignity, friendship, fraternity, worldview.

ՀՏԴ 81.282:81'374.73

Հ.Ձ. ՂԱԶԱՐՅԱՆ

**ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Դիտարկվում է հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ մարդու ֆիզիկական վիճակն արտահայտող դարձվածքների իմաստային դաշտը: Քննությունը ցույց է տալիս, որ հիշյալ դաշտն առկա է դիտարկվող բոլոր լեզուներում: Բացահայտվում են տարբեր լեզուների նշված դարձվածքների իմաստային առանձնահատկությունների ընդհանրություններն ու տարբերությունները:

Առանցքային բառեր. դարձվածք, իմաստային դաշտ, առանձնահատկություն, հոմանիշ, հականիշ, դարձվածքային համարժեքներ, լեզվամտածողություն:

Միևնույն հասկացությունը կարող է մի դեպքում արտահայտվել բառերով, մեկ այլ դեպքում՝ մարդկային մտածողության ավելի բարձր մակարդակում առաջ եկած և տվյալ լեզուն կրող ժողովրդի խոսքին ավելի մեծ հուզաարտահայտչականություն և պատկերավորություն հաղորդող լեզվական միավորներով՝ դարձվածքներով: Դարձվածքում ի հայտ եկող պատկերը փոխաբերական կերպով բնութագրում է դարձվածքի իմաստը: Այստեղ կարևորվում է նաև պատկերավոր պատճառաբանվածությունը, որն այն փոխաբերական իմաստն է, որը հիմք է ծառայել տվյալ դարձվածքային միավորի առաջացման համար, ապա հետագայում խամրել, ինչպես այն դարձվածքներում, որոնցում բաղադրիչները գրկվել են իրենց նախնական իմաստից: Փոխաբերական վերաիմաստավորման արդյունքում նոր իմաստ ձեռք բերած միավորները տեղափոխվում են իմաստային մեկ այլ դաշտ [1]:

Իմաստային դաշտը տարբեր խոսքի մասերին պատկանող, սակայն մեկ հասկացություն արտահայտող բառերի ամբողջություն է: Բառային միավորների և հասկացության առնչությունը, որն ընկած է դաշտի միավորման հիմքում, կարող է տարբեր լինել: Բառը կարող է հասկացություն արտահայտել և վերջինիս հետ առնչվել միջնորդավորված ձևով՝ իր իմաստային կառուցվածքի ստորադասական բաղադրիչների միջոցով: Բառային նշանները, որոնց իմաստային կառուցվածքում հատկանիշը զբաղեցնում է գերիշխող դիրք և համընկնում դաշտը միավորող հասկացության հետ, կազմում են նրա միջուկը, իսկ այն բառային միավորները, որոնցում հատկանիշը ստորադասական դիրքում է, գտնվում են իմաստային դաշտի եզրում: Քանի որ բառային միավորների մեծ մասի կազմությունն ունի բազմաթիվ հատկանիշներ, դրանք կարող են ընդգրկվել հասկացական բազմաթիվ դաշտերում՝ իրենց իմաստային հատկանիշներին համապատասխան, իսկ դաշտերը՝ որպես բառային նշանների բազմություններ, խաչաձևվում են և հստակ սահմաններ չունեն [2]:

Դարձվածքները ևս կարող են ընդգրկվել իմաստային դաշտերում: Այս դեպքում նշված միավորները տվյալ հասկացական դաշտում են ներառվում ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ իրենց կառուցվածքային, ձևաբանական, շարահյուսական, ոճական և այլ առանձնահատկություններից: Դարձվածքները կարող են ընդգրկվել ամենատարբեր իմաստային դաշտերում: Այդ դաշտերից մի քանիսը բազմանդամ են, մյուսները ներառում են ընդամենը մի քանի դարձվածք: Հարկ է նշել, որ թեև դարձվածքների ճնշող մեծամասնությունը մենիմաստ է, սակայն հանդիպում են նաև բազմիմաստները, և հաճախ միևնույն դարձվածքն իր տարբեր իմաստներով կարող է տեղ գտնել իմաստային տարբեր դաշտերում:

Աշխատանքում զուգադրվում և վերլուծվում են մարդու ֆիզիկական վիճակն արտահայտող մարմնի տարբեր մասերի անվանումներով ձևավորված դարձվածքների իմաստային դաշտերը հայերենում, ռուսերենում և անգլերենում: Դիտարկվող երեք լեզվում էլ առկա են հիշյալ իմաստներն արտահայտող դարձվածքների դաշտեր՝ իրենց ենթադաշտերով: Դրանք երբեմն համընկնելով, հաճախ տարբերվում են իրենց իմաստային նրբերանգներով: Բերենք մի քանի նման դարձվածքներ դիտարկվող լեզուներում:

Գլուխը տաքանալ/տաքացնել,– մի փոքր հարբել, գինովնալ, խմելուց՝ լեզուն կապվել: *Գլուխը օղուց տաքացել էր, չկարողացավ ծածկել գաղտնիքը* (ԹԱ, 249): **Գլուխը պտտվել/պտույտ գալ**,– գլխապտույտ ունենալ, աչքերի առաջ շաղվել: **Գլուխը կախ/քաշ**, – 1. գլուխը խոնարհած: *Վարդանը գլուխը կախ լսում էր իր մարտիկների գանգափները և տիրում* (ԴՎ, 385): 2. Իր գործով տարված: *Յերեկով մտիկ են անում՝ մի խեղճ մարդ է, մի փոքրիկ նեղ խանութում, գլուխը կախ իր բանի վրա* (ԹԵ, 5, 277): **Գլուխը տրաքվել/տրաքել**,– գլուխը սաստիկ ցավել: –

Մերժու՛մ... արհամարհա՛նք, ի՛նձ, ի՛նձ, օ՛հ, գլուխս, գլուխս տրաքում է, տրաքում (ԱԵ, 432): **Աչքը/աչքերը ձնով ընկնել** (բրբ.), – ձյանը երկար նայելուց աչքը շաղվել: **Աչքը հատ ընկնել**, – աչքի եղջերաթաղանթի վրա սպիտակ կետ առաջանալ: *Տղիդ աչքը հասր է ընկել, տար, քաղել տուր* (ՀԼԴԲ, 63): **Աչքերը խորն ընկնել**, – նիհարելուց, հյուժվելուց աչքերը դեպի ակնախոռոչները խորանալ: *Կարծես նրա դեմքն ավելի է չորացել, խորշոմել, թախծալի աչքերն ավելի խորն են ընկել* (ԹՊ, 126): **Աչքը (աչքերը) սև ու դեղին անել**, – աչքերը շաղվել, աչքերի առաջ խավար երևալ: **Աչքի սևն ու սպիտակը դեղնել** (խսկց.), – ուշագնաց լինել, նվաղել:

Սիրտը, լինելով մարդու ամենակենսական օրգաններից մեկը, մարդու հոգեկան ապրումների կենտրոն լինելով հանդերձ, մեծ չափով պայմանավորում է նաև մարդու ընդհանուր ինքնազգացողությունը: Այսպես, արագ քայլելիս կամ վազելիս՝ մարդու շունչը կտրվում է, նա սկսում է հեալ, ինչ-որ բանի նկատմամբ ֆիզիկական նողկանք զգալիս՝ սիրտը խառնում է, արյան ճնշման բարձրանալու և իջնելու, ֆիզիկական որևէ վնասվածք ստանալու, հոգնելու, քաղցի հետևանքով անձը կարող է նվաղել, ուշաթափվել, որևէ զգացում ապրելիս մարդը կարող է ուժեղ սրտխփոց ունենալ, սրտում ցավ զգալ: Հետևաբար, մարդու ֆիզիկական վիճակը կարող է բնախոսական մեկնաբանությունների առիթ հանդիսանալ, որոնք հիմք են ծառայել դարձվածքների ձևավորման համար, դարձվածքներ, որոնք արտացոլում են մարդու ֆիզիկական վիճակը. **սիրտը մարել**, – նվաղել, թուլանալ, ուշաթափվել (ուժեղ հուզմունքից, քաղցածությունից): *«Լուսանու՛մ է»,- հանկարծ շնչաց Արտակը և զգաց, որ սիրտը մարեց, ճմլեց ու սպա սկսեց զարկել* (ԴՎ, 237): **Սիրտը գնալ**, – նվաղել, ուշաթափվել: *Այս ասելուց հետո թագավորը կանգ առավ և հետո դարձավ կրկուսերին, որ սաստիկ շփոթվելուց քիչ էր մնում սիրտը գնա և վայր ընկնի գորգերի վրա* (ԱԵ, 564):

Բերենք մարմնի այլ մասերի անվանումներով ձևավորված դարձվածքներ. **ծնկները դողալ**, – ֆիզիկական թուլությունից ոտքի վրա հազիվ մնալ: – *Սպասի՛ր, մի քիչ հանգստանամ, ծնկներս դողում են,- ասաց մայրը որդուն: Հոգին հոժար է, մարմինը տկար*, – ցանկություն ունի, բայց ֆիզիկապես թույլ է: **Ջան չունենալ** (խսկց.), – հիվանդ, հոգնած, տկար լինել: *Երկուսը լավացան, էն մինը երեխան փչացրեց, հիմի էլ ջան չունի* (ԲԵ, 90): **Ձեռ ու ոտը քաշվել** (խսկց.), – անդամալույծ դառնալ, չկարողանալ շարժվել: **Ձեռից (ու/և) ոտից ընկնել**, – ոտ ու ձեռքը թուլանալ, հաշմվել, անզոր դառնալ (ծերանալուց): *Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին, Ես եմ ու էն արտն աստղծու տակին, Ինչո՞ւ ես գնում տափում, տրորում: Իմ ամբողջ տարվան աստղուստը կտրում* (ԹԵ, IV, 16): **Ոտն ու ձեռքը թուլանալ**, – խիստ վախենալ, հուզվել: – *Իսկ Քնարիկը, ոտն ու ձեռքը թուլացած, նստեց, մնաց սենյակի մեկ անկյունում* (ԹԱ, 40): **Ոտները ջուր իջնել /մաղվել**, – շատ երկար կանգնած մնալուց հոգնել: *Հերթի սպասելով ճարս կտրավ, ոտներս*

ջուր մաղվեց (ՀԼԴԲ, 477): **Ուղեղը պայթել**,– ուժեղ գլխացավ զգալ: **Շունչը փորն ընկնել** (խսկց.),– շնչասպառ, ուժասպառ լինել վախից, հուզմունքից և այլն: *Որսի մի շուն երևաց, հորոտրեց Ավուն, անցավ: Ավու շունչը փորն ընկավ* (ԲԵ, 30): **Քթից բռնելիս հոգին դուրս գալ/ելնել/շունչը տալ**,– շատ թույլ, հյուժված լինել: *Այնքան է հյուժվել ու մաշվել, որ քթից բռնելիս հոգին դուրս կգա: Աղիքները իրար ուտել* (գռիկ.),– սաստիկ քաղցած լինել: **Բամբակի քթով ջուր խմեցնել**,– ասվում է ծանր հիվանդի մասին, ով անգամ ջուր չի կարողանում խմել: *Այնքան ծանր է, որ բամբակի քթով են ջուր խմեցնում* (ՀԼԴԲ, 103): **Փորը տրորվել**,– 1. փորը սաստիկ ցավել: 2. Սաստիկ քաղցից տանջվել: **Голова трещит**,– մեկի գլուխը սաստիկ ցավում է: *У меня голова трещит, когда подумую о его будущности, а главное о будущности Анны Николаевны, когда она будет его женой* (ԴՓԲ, 289). **Ударять / ударить в голову**, – գլխին խփել, գլուխն ընկնել, արբեցնող ազդեցություն ունենալ (խմիչքի մասին): *Да кроме того, выпил эти полстакана вина, и уже капельку в голову ударило* (ԴՓՊ, 451). **Бросаться /броситься в голову**, – արբեցնել (օղու մասին): *Теперь же состояние его походило на какой-то даже восторг, и в то же время как будто все выпитое вино вновь, разом и с удвоенною силой бросилось ему в голову* (ԴՓՊ, 187). **Тяжелая голова**, – հոգնածությունից գլուխը ծանրացել է: – *Право, я чувствую себя не так здоровым, у меня голова тяжела, от дороги, что-ль,- отвечал князь нахмурясь* (ԴՓԻ, 226). **Голова идет /ходит /пошла кругом**,– հոգնածությունից գլուխը պտտվել: *Начнем сызнова, кинем жребий, кому стрелять первому. Голова моя шла кругом* (ԿԱՏ, I,199): **С пьняных глаз** (ժղվրդ.),– հարբած վիճակում ինչ – որ բան անել: *Я думаю, что он с пьняных глаз мне такую грубость сказал* (ԴՓԲ, 75). **В глазах темнеет**,– թուլությունից, հոգնածությունից ուշակորոպս լինել: *Строчки мешались перед ней, потому что в глазах темнело, но она знала наизусть, что читала* (ԴՓՊ, 311). **Искры из глаз посыпались**,– սուր ցավ զգալ գլխին կամ դեմքին ստացած հարվածից: *Она так стукнула его локтем в переносицу, что из глаз его посыпались искры* (Ր-ԱՓՏ, 252). **Едва ноги волочить**,– Հոգնածությունից, հիվանդությունից շատ դանդաղ քայլել: **Заливать / залить мозги** (ժղվրդ.),– խմել, հարբել: *Весь интерес жизни: есть побольше и залить мозги водкой* (Ր-ԱՓՏ, 233). **Живот к позвонкам прилипают** (խսկց., կտկ.),– շատ քաղցած, փորը դատարկ, նիհար, հյուժված: *Я уж думал, у меня живот к позвонкам прилипает* (Ր-ԱՓՏ, 224). **Have a head (on one)** (խսկց.) – գլուխը խմելուց ցավում է: *Tom had a grand dinner yesterday and as he was not used to it, he had a head on him* (Ե-RPHD, 205). **Go to sb’s head**, – հարբել: *Both Maria and Martin drank the sour new wine on empty stomachs, and it went swiftly to their heads* (LJM, 229). *He realized that he had plenty of whisky in the house, that in any case it would take very little to go to the old woman’s head* (ՇԱԿ, 492). **Blue eyes**, - կապտուկներ աչքերի տակ: **As hearty as a buck**, - առողջ, պինդ: *I am hearty as a buck, but can't jump just as*

high (E-RPHD, 113). **Be (down) on one's back**,– 1. անօգնական լինել, թիկունքի վրա լինել, պարտվել: *He had shot his bolt, and now he was down on his back* (LJM, 253). 2. Անկողին ընկնել, հիվանդանալ: **The spirit is willing but the flesh is weak**,– հոգով ուժեղ, մարմնով՝ թույլ: **Lie/sit heavy on one's/ the stomach**,– դժվար մարսել: *That pudding will lie heavy on your stomach* (E-RPhD).

Մարդու ֆիզիկական վիճակն արտահայտող դարձվածքների մեջ տեղ են գտել նաև մի շարք այլ միավորներ՝ **գլուխն իրենը չլինել** (շշմած, թմրած լինել, գլխացավ ունենալ), **գլուխը դժժալ**,– ականջներում աղմուկ զգալ, **գլուխը պտտվել/դառնալ** (արևմտ.) (հիվանդությունից, արյան պակասությունից ևն), **քրտինքը աչքերը կալել** (սաստիկ քրտնել), **ջանի գալ** (գիրանալ, կազդուրվել), **միս ու մոուրից ելած** (սաստիկ նիհարած), **թոքին տալ** (հազալ), **ոտքերը հազիվ շարժել** (շատ հոգնած լինել), **անոթի փորով** (խիստ քաղցած), **քիթը պոզ դառնալ** (խիստ նիհարել, հյուծվել), **սիրտը վեր ածել** (փսխել), **սիրտը նետել** (սիրտը ուժեղ բաբախել), **սիրտը կանգնեցնել** (քաղցն անցկացնել) **голова лопается** (գլուխը ցավից պայթում է), **не иметь где прислонить голову** (ապրելու տեղ չունենալ), **голова болит** (գլուխը ցավում է, մեկն անհանգստանում է, վատ է զգում), **шумит в голове** (ականջները դժժում են), **едва на ногах стоит** (շատ հոգնած է), **стоять одной ногой в могиле** (ծեր լինել, մահվանը մոտ լինել), **на голодный желудок** (սոված փորով), **a frog in one's throat** (կոկորդը չորացել է):

Մարդու ֆիզիկական վիճակն արտահայտող դարձվածքներն ունեն իմաստային տարբեր նրբերանգներ, դրանցից են. վատ ինքնազգացողությունը՝ **գլուխն այրվել**, **գլուխը պտտվել/պտոպտ գալ**, **գլուխը ծանր**, **գլուխը կտոր-կտոր լինել**, **գլուխը բռնել**, **голова лопается, голова кружится, have a head on**), հարբածությունը՝ **գլուխը տաք**, **գլուխը տաքանալ**, **գլուխը գինովցնել**, **գլուխը բռնել**, **գլխին զարկել**, **գլուխն ընկնել**, **ударить в голову, броситься в голову, go to sb's head**, հոգնածությունը՝ **գլուխը ծանրանալ**, **ոտքերը սև ջուր իջնել**, **тяжелая голова, голова идет кругом, голова кружится**, շփոթմունքը՝ **գլուխը իրենը չլինել**, ծերությունը՝ **գլխին ձյուն իջնել/նստել/մաղվել/գալ**, մի ոտքը գերեզմանում լինել, տեսողության վատանալը՝ **աչքին հատ գալ**, **աչքի լույսը խավարել**, նողկանքը՝ **սիրտը վեր ածել**, ուշաթափությունը՝ **աչքի սևն ու սպիտակը դեղնել**, **в глазах темнеет**, շարժվելու անկարողությունը՝ **ձեռ ու ոտը թուլանալ**, **ոտները թուլանալ** քաղցածությունը՝ **անոթի փորով**, **փորը վեց-վեց անել**, ցավը՝ **գլուխը պայթել**, **голова лопается**, առողջությունը՝ **թշերից արյուն կաթել**, **as hearty as a buck**, մարսողության խանգարումը՝ **փորը կապ լինել**, **lie heavy on the stomach** և այլն:

Ինչպես նկատում ենք, վատ ինքնազգացողության, հարբածության նրբիմաստներ արտահայտող դարձվածքներ կան թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում: Ընդ որում, **գլուխը բռնել** դարձվածքն իր մեկ իմաստով ար-

տահայտում է վատ ինքնազգացողության, մյուսով՝ հարբածության երանգները: Հոգնածության, շփոթության, ծերության նրբիմաստ ունեցող դարձվածքների առկա են միայն հայերենում և ռուսերենում:

Իմաստային այս դաշտում տեղ են գտել նաև մարդու ֆիզիոլոգիական վիճակներից մեկի՝ քնի վիճակն արտահայտող դարձվածքներ:

Մի աչքը քուն, մյուսն արթուն, – թեթև քնած, կես-քուն, կես-արթուն: **Աչքի ճիճուն/որդը կտորել** (խսկց.), – Մի փոքր քնելով՝ քնատությունից հոգնած աչքերը հանգստացնել: **Աչքերը կուլ գնալ**, –1. հոգնածությունից՝ անքնությունից աչքերը փակվել, 2. ննջել, քունը գալ: – *Ինչ լավ տեղ է,- բացականջում է երիտասարդը,- բայց էնքան հոգնել եմ, որ աչքերս կուլ են գնում* (ԹԵ, V, 339): **Քունը աչքի եզրին լինել**, – քնելու մեծ ցանկություն ունենալ: *Քունը աչքի եզրին էր, սրիպում էր պառկել, հանգստանալ* (ԹԱ, 196): **Աչքը կաչել (կպցնել)**, – քնել: *Ամբողջ գիշերը չի կարողանում աչքը կպցնի, տանջվում է ու տանջվում* (ԹԵ, V, 351): **Քունը գալ՝ աչքերը լցվել, քունը աչքերն առնել, աչքերին քունը գալ/իջնել** – քունը տանել, քնելու ցանկություն ունենալ, ննջել: *Հոգնած էր Գուրգենը, և քունն իսկույն իջավ նրա աչքերին* (ԲԱ, 54): **Քունը աչքերին, քունը գլխին**, կիսարթուն վիճակում: **Քունը աչքերին ծանրանալ**, – քնելու ուժեղ ցանկություն ունենալ: *Խանդավառ ուսումնասերը զլուխը բարձրացրեց մեր գրականության գանձարանից, հորանջեց, պառկեց անկողին, և քունը ծանրացավ նրա աչքերին* (ԹԱ, 111): **Քուն առնել/քուն գալ մեկի վրա/քուն գալ աչքին**, – քնել: **Աչքի քունը կտորել**, – չթողնել քնել, քունը փախցնել, քնից զրկել: *Ու կտրեցեք աչքի քունը, սրտի հանգիստն կտրեցեք* (ԹԵ, IV, 42): **Քունը աչքից/աչքերից փախչել**, – Որևէ պատճառով քունը խանգարվել: *Ու դարձավ նա լուռ, դալու՛կ, մտախո՛հ, Ու քունը փախավ սիրուն աչքերից* (ԹԵ, IV, 152): *Քունը փախչում էր նրա աչքերից, գիշեր – ցերեկ միայն էն է մտածում, որ գնա՛, գնա՛ գտնի Ոսկի քաղաքը, ուր ուզում է լինի, ու գա պատմի Քանաքարային* (ԹԵ, V, 255): **Աչքը չփակել/չխփել/չկպցնել**, – քնել չկարողանալ: *Ի՞նչ է տանջում նրան, երեք օր է աչք չի փակում: Աչքերը տրորել* – քնից նոր արթնանալ: – *Երբ սենյակ մտա, արդեն աչքերն էր տրորում: Продирать/протирасть/протереть глаза/продрать глаза* (ժղվրդ.), – նոր արթնանալ: *Мой благоверный, должно быть, теперь глаза продрал* (ТИТ, 99). **Глаза слипаются / закрываются**, – մեկը ցանկանում է քնել: *У тебя вон слипаются глаза, а я еще, за работу сяду: к концу месяца надо учесть свести* (ГИО, 44). **Не смыкать / не сомкнуть глаз**, – բոլորովին չքնել, աչք չկպցնել: *Я лежала как будто в забытьи, но сон не смыкал глаз моих* (ДФПо, 197). **Спать без задних ног**, – խոր քուն մտնել: *Она всегда спала без задних ног. Put one's eyes together*, – կոպերը փակել, քնել: **One's eyes draw / gather / pick straws** (հնց), – մեկի աչքերը փակվում են, քունը տանում է: *As I had been up since five in the morning, my eyes were gathering straws* (E-

RPhD, 255). **Not to bat an eye**, - ասք չփակել, չքնել: *If my patient can't sleep not a soul in the house shall bat an eye all night* (E-RPhD, 67).

Քնի վիճակն արտահայտող դարձվածքները քննելիս նկատում ենք, որ դրանցում ևս առկա են մի շարք նրբիմաստներ: Այսպես, դիտարկվող լեզուներում առկա են իրար հակադրվող երկու՝ քնելու և չքնելու, ինչպես նաև քնելու ցանկություն ունենալու նրբերանգները: Հայերենում և ռուսերենում **աչքերը տրորել** և **продирать глаза** դարձվածքներն ունեն քնից նոր արթնանալու նրբիմաստը: Մնացած բոլոր՝ թեթև՝ ոչ խոր քնելու, քունը ինչ-որ պատճառով խանգարվելու, խափանվելու, քնից զրկվելու, չքնելու՝ աչալուրջ լինելու, քնել չթողնելու կամ չկարողանալու իմաստային նրբերանգները հատուկ են միայն հայերենի դարձվածքներին:

Դիտարկված դարձվածքները պատկանում են ամենատարբեր կառուցվածքային տիպերի՝ պայմանավորված ուսումնասիրվող լեզուների տիպաբանական առանձնահատկություններով: Ենթադաշտերում տեղ են գտել գոյականական, ածականական, բայական ու մակբայական դարձվածքներ: Նկատելի է, որ ավելի բազմազան են հայերենի և ռուսերենի դարձվածքների կառուցվածքային տիպերը, մինչդեռ անգլերենում բերված դարձվածքները հիմնականում բայական են: Տարբեր են նաև դարձվածքներում գործող քերականական կարգերը:

Մարդու ֆիզիկական վիճակն արտահայտող դաշտն իր ենթադաշտերով ուսումնասիրելիս նկատում ենք, որ դիտարկվող երեք լեզուների դաշտերից ամենաձավալունը հայերենի ենթադաշտերն են: Դարձվածքների ճնշող մեծամասնությունը մենիմաստ է, սակայն հանդիպում են նաև երկիմաստները: Հարկ է նշել, որ որոշ դարձվածքներ իրենց տարբեր իմաստներով կարող են տեղ գտնել իմաստային տարբեր դաշտերում: Այստեղ դիտարկվել են միայն այս դաշտին վերաբերող իմաստները:

Ուսումնասիրված դարձվածքների մեջ կան դարձվածային տարբերակներ՝ բառային, քերականական, ոճական, քանակական և այլն՝ **գլուխը պտտվել/պտույտ գալ**, **գլուխը կախ/քաշ**, **աչքը/աչքերը ձնով ընկնել**, **աչքի ճիճուն/որդը կոտրել**, **ոտները ջուր իջնել/մաղվել**, **քունը աչքից/աչքերից փախչել**, **ударять/ударить в голову**, **заливать/залить мозги**, **живот к позвонкам прилипают/прилип**, **не смыкать/не сомкнуть глаз**, **have a head (on one)**, **lie/sit heavy on one's/the stomach**, **one's eye's draw/gather/pick straws** և այլն:

Դարձվածքների մեջ նկատվում են նաև հոմանիշային մի քանի շարքեր՝ **գլուխը տրաքվել** – **գլուխը կտոր-կտոր լինել** – **գլուխն այրվել** – **ուղեղը պայթել**, **աղիքները իրար ուտել** – **փորը տրորել (II)**, **սիրտը մարել** – **սիրտը գնալ**, **գլխի/գլխուն միսն ուտել** – **գլուխը ցավեցնել** – **գլուխը դանգ ու սար անել**, **անոթի փորով** – **փորը վեց-վեց անել**, **աչքը չկպցնել** – **աչքին քուն չգալ** – **քունը աչքերից փախչել**, **քիթը պոզ դառնալ** – **միս ու մոռթից ելած, մեջքը փորին**

կպած, ударить в голову – бросаться в голову, голова лопается – голова трещит, put one's eyes together – one's eyes pick straws.

Հանդիպում են նաև մի շարք հականիշ դարձվածքներ՝ **գլուխը ծանրանալ – գլուխը կարգի գալ, գլուխը չոր քարին դնել – գլուխը յուղ ու մեղրի մեջ լինել, ջանի գալ – վիզը տանձի պոչ դառնալ, мутиться в голове – на свежую голову, не сомкнуть глаз – спать без задних ног, rosy/pink around the gills – green around the gills.**

Դիտարկվող դարձվածքներն օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում, գրքային ոճում, մամուլում, բարբառներում: Դրանք մեծ թիվ են կազմում նաև գեղարվեստական գրականության մեջ՝ գունավորելով հեղինակի խոսքը՝ ավելի հյութեղ ու տպավորիչ դարձնելով այն:

Երեք լեզուների դիտարկվող դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դարձվածքների ճնշող մեծամասնությունը բնորոշ է այս կամ այն լեզվին, սակայն հանդիպում են նաև այնպիսիք, որոնք ունեն իրենց համարժեքները դիտարկվող մյուս մեկ կամ երկու լեզուներում: Բերենք մի քանիսը՝ **ականջները դժժալ, գլուխը դժժալ – шумит в голове, գլուխը ուռչել – голова распухла, անոթի փորով – на голодный желудок, աչք չկպցնել – не сомкнуть глаз – not to bat an eye (II իմաստով), գլուխն ընկնել, գլուխը տաքանալ, գլխին խփել – ударить в голову, бросаться в голову – go to one's head, գլուխը պտտվել/դառնալ/շուռ գալ – голова кружиться, голова идет кругом – one's head is going round, մեջքը փորին կպած, քիթը պոզ դառնալ – живот к позвонкам прилип, հազիվ կանգնել ոտքի վրա – едва на ногах стоит.**

Երեք լեզուների իմաստային դաշտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում տեղ գտած դարձվածքներն ունեն թե ընդհանրություններ և թե տարբերություններ: Տարբերությունները հիմնականում նկատվում են տարբեր լեզուների դարձվածքների կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկություններում, իսկ ընդհանրությունները՝ իմաստային առանձնահատկություններում՝ դարձվածքների արտահայտած նրբերանգներում: Ընդհանրություններն ու տարբերությունները վկայում են դիտարկվող լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և տարբերությունների մասին և նպաստում լեզվական ընդհանրությունների բացահայտմանը դարձվածաբանության ոլորտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Селезнева Г.Я.** Семантические категории сопоставительного изучения русского языка, Воронеж, 1986, с. 72.
2. **Вердиева З.Н.** Семантические поля в современном английском языке, М., 1986, с. 4.

3. Հոդվածում տեղ գտած օրինակները քաղվել են ներքոհիշյալ բառարաններից և հեղինակների գործերից: Որոշ դարձվածքներ օգտագործվել են սեփական օրինակներում: **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (Երևան, 1975): **Квеселевич Д.И.** Русско-английский фразеологический словарь (М., 1998). **Kunin A.V.** English – Russian Phraseological Dictionary (М., 1984). **Թորգոմյան Ծ.** «Անմար կրակներ» (1959), «Պատմվածքներ» (1973), **Բես Գ.** «Այրված վշտեր» (1967): **Թումանյան Հովհ.** «Երկերի լիակատար ժողովածու». 10 հատորով, հատ. 4,5 (1993): **Դեմիրճյան Դ.** «Վարդանանք» (1987): **Աղայան Ղ.** «Երկեր» (1979): **Достоевский Ф.М.** “Бедные люди”, “Униженные и оскорбленные” (1974), “Преступление и наказание” (1993), “Идиот” (1981), “Повести” (1984). **Куприн А.И.** “Сочинения в 2-х томах, Т. 1” (1981). **Тургенев И.С.** “Три встречи” (1979). **Гончаров И.А.** “Обыкновенная история” (1968). **London J.** «Martin Eden» (1954). **Cronin A.J.** «Hatter's Castle» (1963).

A.Յ. КАЗАРЯН

**СЕМАНТИЧЕСКОЕ ПОЛЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ, ВЫРАЖАЮЩИХ
ФИЗИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ ЧЕЛОВЕКА В АРМЯНСКОМ,
РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ**

Рассматривается семантическое поле фразеологизмов, выражающих физическое состояние человека в армянском, русском и английском языках. Анализ показал, что указанное поле существует во всех рассматриваемых языках. Выявляются общности и различия семантических особенностей данных фразеологизмов разных языков.

Ключевые слова: фразеологизм, семантическое поле, особенность, синоним, антоним, фразеологические эквиваленты, языковое мышление.

H.Z. GHAZARYAN

**THE SEMANTIC FIELD OF THE ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH
PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING THE PHYSICAL STATE OF A
PERSON**

The semantic field of the Armenian, Russian and English phraseological units, expressing the physical state of a person is considered. Investigations show that the mentioned field is available in all the languages considered. The similarities and differences of the semantic peculiarities of the given phraseological units of different languages are revealed.

Keywords: phraseological unit, semantic field, peculiarity, synonym, antonym, equivalent phraseological units, linguistic thinking.